

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՇՅԱՆ ԲԱՐՍԵՂ ԺՈՐԱՅԻ

**«ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՅՄԱՆ» ՆԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՓՈՓՈԽՎՈՂ
ՆԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
(XX դարավերջի - XXI դարասկզբի ճապոնիայի օրինակով)**

**ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիայի պարմություն, տեսություն և մեթոդաբանություն»
մասնագիտությամբ
սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի
գիտական ասպիրճանի հայցման արեւնախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2013

Արենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Ն. Նարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, դոցենտ Մ.Ի. Զասլավսկայա

Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Ժ.Ա. Անդրեասյան

Առաջարկ կազմակերպություն՝ ՆՆ ԳԱԱ Ննագիտության և
ազգագրության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. դեկտեմբերի 18-ին, ժ. 15.00 -ին Երևանի պետական համալսարանում գործող ՆՆ ԲՈՆ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փ., 52ա:

Արենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտական աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. նոյեմբերի 15 -ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ս.Ա. Զաքարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՏԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը և հրատապությունը: Սոցիալական և բնական գիտություններում, փիլիսոփայության, ի մասնավորի ճանաչողության տեսության մեջ «մեթոդաբանական համապարասխանեցումը» նշանակում է տեսական գիտելիքի համապարասխանեցում հեղափոխվող օբյեկտին, որի շնորհիվ օբյեկտի տեսական պարկերը արտացոլում է «օրիգինալը»¹:

Ներխորհրդային հասարակությունների ուսումնասիրությունների «մեթոդաբանական համապարասխանեցումը» արդիական է այդ հասարակություններում մարքսիզմի անկման և կոնֆլիկտաբանական տեսությամբ առաջնորդվող սոցիալական գիտությունների ճգնաժամի պարճառով:

Չնայած հեղափոխության երկրներում գոյություն ունեցող խոր սոցիալական, տնտեսական և մշակութային կոնֆլիկտներին և հիմնարար կոնֆլիկտաբանական ուսումնասիրությունների հանդեպ առկա հեղափոխությանը՝ այդ հասարակություններում առաջադիմում են ոչ թե քննադատական և կոնֆլիկտաբանական տեսությունները, այլ ազգային պետությունների կառուցմանն ուղղված անջատողական ազգայնականությունը²: Ինչպես ցույց են տվել Ֆ. Ֆանոնի ուսումնասիրությունները, դեմոկրատական և անկախական շարժումների շնորհիվ իշխանության եկող էլիտաները օգտագործում են ազգայնականության քողը և այն դարձնում փրկապետության գործիք³: Այս էլիտաները անտարբեր են հիմնարար կոնֆլիկտաբանական տեսությունների հանդեպ, որոնք բացահայտում են իրենց կառավարած հասարակություններում սոցիալական բևեռացումը, իրավունքների անհավասարությունը և հակասությունները:

Արդյունքը լինում է այն, որ նախկին ԽՍՀՄ երկրներում սոցիալական գիտությունները կորցնում են իրենց հեղափոխական, ճանաչողական և տեսամեթոդաբանական հիմնարար արժեքը: Ինչպես բացահայտում է վերջին 10-15 տարիների ակադեմիական վիճակագրությունը՝ հեղափոխության երկրներում հասարակագիտության զարգացման հիմնական միտումներից մեկը Արևմուտքից

¹ Տե՛ս <<University of Lethbridge: Conditions for Methodological Adequacy>> // <http://classes.uleth.ca/200803/anth3010a/lecture16.pdf> [վերջ. այց. 03.06.2013, ժ. 11:20]:

² Տե՛ս **Befu, H.** Cultural Nationalism in East Asia: Representation and Identity // Institute of East Asian Studies, University of California, Berkeley, 1993, էջ 2:

³ Տե՛ս **Fanon, F.** The Wretched of the Earth. New York, Grove Press, 2004:

ակադեմիական կախվածության (*academic dependency*) մեծացումն է: Նամաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրության՝ սոցիալական գիտությունների ոլորտում համեմատաբար ինքնիշխան նախկին խորհրդային երկրները ԽՍՀՄ-ի քայքայումից տասը տարի անց մեծապես կախման մեջ են ընկել սոցիալական գիտությունների բնագավառի երկու ազդեցիկ շրջաններից՝ Նյուսիսային Ամերիկայից և Եվրոպայից⁴:

Այս տեսակետից խիստ արդիական է հետխորհրդային հասարակագիտության տեսամեթոդաբանական սկզբունքների և «մեթոդաբանական համապատասխանեցման» քննությունը: Ըստ այդմ, նկատի առնելով հատկապես վերջին երկու տասնամյակներում Ասիայի և Ճապոնիայի գիտական հետազոտությունների «մեթոդաբանական համապատասխանեցումը» և ֆունկցիոնալիստական մեթոդաբանությունից կոնֆլիկտաբանական մեթոդաբանությանը կատարված անցումը, կարևորվում է Ճապոնիայի ուսումնասիրությունների տեսամեթոդաբանական համապատասխանեցման փորձի ուսումնասիրությունը: Դա հատկապես կարևոր է հետևյալ նկատառումներով.

ա/ ճապոնական հասարակության հետազոտության մեջ մասնագիտացած տեղական, ինչպես նաև անգլո-ամերիկյան հասարակական գիտությունների տեսամեթոդաբանական սխեմաները մեզ համար արդիական են, քանի որ համաշխարհային տնտեսության դարաշրջանում լուրջ ներդրում են «ազգ-պետության» կամ «էթնոմշակութային պետականության» ուսումնասիրության ասպարեզում,

բ/ Ճապոնիայի և Ասիայի «սոցիալական կարգի» ուսումնասիրությունը արդիական է, քանզի մեթոդաբանական քննարկումներն իրականացվում են արևմտյան համատեքստից դուրս և փորձ է արվում համադրել «լոկալ մշակույթները» և արևմտյան ունիվերսալիստական տեսությունները,

գ/ Ճապոնիային և Ասիային անդրադառնալը կարևոր է նաև այն իմաստով, որ քննելով ճապոնական հասարակությունը, ինքնըստինքյան անդրադառնում ենք ընդհանուր սոցիոլոգիական տեսության էվոյուցիային և «համաշխարհային կապիտալիզմի զարգացման մշակութային փարբերությունների» սխեմայից արևմտյան ունիվերսալիստական սխեմաներին կատարված անցմանը:

Ուսումնասիրության օբյեկտը: Արենախոսության ուսումնասիրության օբյեկտը հետազոտության համար օգտագործվող տեսամեթոդաբանական սկզբունքներն են, այսինքն՝ քննարկվող տեսությունների և մեթոդաբանության փարբերը, հասկացության կազմը, ինչպես նաև հասարակության քննության ընթացքում կիրառվող մոտեցումները և տեսական դրույթները:

⁴ Մանրամասն տե՛ս <<World Social Science Report-2010>>. UNESCO Publishing:

Ուսումնասիրության առարկան: Արենախոսության ուսումնասիրության առարկան սոցիոլոգիական ճանաչողության գիտաբանական համակարգի՝ տեսությունների, օրենքների, մեթոդաբանության տեսամեթոդաբանական համապարասխանեցումն է՝ սոցիալական, տնտեսական, մշակութային, քաղաքական և արևմտյան ակդեմիական ազդեցության համապատասխանում:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Նկարի առնելով հետախորհրդային հասարակությունների տեսամեթոդաբանական ուսումնասիրության այժմեականությունը, վերջին երկու տասնամյակներում Ասիայի և Ճապոնիայի հասարակությունների ուսումնասիրության «մեթոդաբանական համապարասխանեցումը», ինչպես նաև այն հանգամանքը, որ Ճապոնիայի պարագայում գործ ունենք արևմտյան ունիվերսալիստական տեսությունների և «լոկալ մշակույթների» փոխհարաբերության հետ, ներկա արենախոսության մեջ սահմանել ենք հետևյալ նպատակները.

ա/ իրականացնել «մեթոդաբանական համապարասխանեցման» ճապոնական փորձի ուսումնասիրություն,

բ/ «մեթոդաբանական համապարասխանեցման» սոցիալ-տնտեսական, մշակութային, քաղաքական հիմքերի ըմբռնման համար իրականացնել 1990-2010թթ. ճապոնա-ասիական հասարակության զարգացման միտումների քննություն,

գ/ ինչպես ճապոնական հասարակության զարգացման միտումները, այնպես էլ ուսումնասիրության տեսամեթոդաբանության հիմքերի փոփոխությունը քննել «ազգային պետության» կամ «էթնոմշակութային պետականության» զարգացման տեսանկյունից՝ հաշվի առնելով հետախորհրդային և հայաստանյան իրողությունները,

դ/ կատարել հետևություններ ճապոնա-ասիական հասարակության ուսումնասիրության փորձի, տեսությունների և մեթոդաբանության հետախորհրդային հասարակություններում կիրառելիության մասին:

Նշված նպատակների իրականացման համար առանձնացվել են մի շարք խնդիրներ, այդ թվում՝

Խնդիր թիվ 1: Իրականացնել 1990-2010թթ. ճապոնական հասարակությանն առնչվող սոցիալ-տնտեսական վիճակագրության, հողավաճների, գիտական տեղեկագրերի, հանդեսների, համապարասխան գիտական մենագրությունների ու տրագիր և էլեկտրոնային նյութերի, լրատվական գործակալությունների հաղորդումների համալիր վերլուծություն,

Խնդիր թիվ 2: Ըստ վերը թվարկված աղբյուրագիտական հիմքերի՝ նշել հասարակության վերլուծության հիմնական թեմաները, զարգացման միտումները և

քննել, թե ինչպես են փարբեր փեքսերում բացառվում ճապոնական հասարակությունն ու իրադարձությունները,

Խնդիր թիվ 3: Կարարել նախորդ խնդրի իրականացմամբ ի հայտ եկող հիմնական թեմաների խոր վերլուծություն՝ դրանց նվիրելով առանձին գլուխներ և ենթագլուխներ:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հաճախակի դարձան Ասիայի հասարակությունների հեղափոխության փեսամեթոդաբանական հիմքերի ուսումնասիրությունները: Սկզբնապես ամենակարևորը Ասիայի երկրների արդիականացման և «լույս ավանդույթների» հարաբերակցության հարցն էր: Այդ փարիներին XVIII դարի Լուսավորականության շարժման վրա հենվող հասարակագիտության մեջ փիրապետող էր այն փեսակետը, որ արդիականացումը պետք է հանգեցնի ամբողջ աշխարհում ավանդույթների դերի անկմանը:

Սակայն 1960-ականներին փոխվում են մոփեցումները: 1959թ. ամերիկացի նշանավոր սոցիոլոգ Է. Շիլզը (1910-1995) «Ավանդույթ և ազատություն. դրանց հակասությունը և փոխադարձ կապը» հոդվածում առաջադրեց այն միփքը, որ անհրաժեշտ է սահմանազատել «ավանդույթը» (փրադիցիան) և «ավանդապաշտությունը» (փրադիցիոնալիզմը)⁵: Ըստ նրա՝ ոչ թե «ավանդույթը», այլ «ավանդապաշտությունն» է հակազդում սոցիալական նոր հարաբերությունների հաստատմանը:

Այնուհետև Բ. Նոզեիփցը (1913-1995) «Ավանդույթ և փնփեսական աճը» աշխատության մեջ զարգացնելով Շիլզի գաղափարները, եզրակացրեց, որ «ավանդապաշտության» գաղափարախոսությունը բացասաբար է անդրադառնում փնփեսական զարգացման վրա, քանի որ հասարակության ուժերը կենփրոնացնում է այն նպատակների իրականացման վրա, որոնք ավելի շուտ վերաբերում են անցյալին, քան ներկային: Սակայն, ըստ նրա, «ավանդույթը», ի փարբերություն «ավանդապաշտության», դրական ազդեցություն ունի հասարակության զարգացման վրա:

Այս գաղափարների համաձայն էլ 1960-ականներին իրականացավ փեսամեթոդաբանական համապատասխանեցում:

1970-80-ականներին հրափարակված գիտական աշխատություններում փիրապետող է դառնում այն գաղափարը, որ Արևելյան Ասիայի երկրներում (Նարավային Կորեա, Ճապոնիա) ավանդույթը էապես նպաստել է փնփեսական, սոցիալական և քաղաքական փոփոխություններին: Ըստ այդմ, ֆունկցիոնալիզմի փեսության հիման վրա

⁵ Տե՛ս **Shils, E.** Tradition and Liberty: Antinomy and Interdependence // *Ethics*, Vol. XLVIII, No. 3, 1958, էջ 153-165:

կատարվում են մի շարք նոր հարցադրումներ և փորձ արվում պարզելու, թե սոցիալական ինստիտուտներն ինչպես են ինտեգրում հասարակությունը՝ հենվելով հարմոնիայի և համագործակցության ավանդական արժեքների վրա:

Նարկ է նշել, սակայն, որ 1980-ականների երկրորդ կեսին ընդգծվեց Ասիայի հասարակությունները միայն ֆունկցիոնալիզմի և ավանդույթների Իրենամեթոդաբանական հիմքի վրա ուսումնասիրելու անբավարարությունը: Ի հակակշիռ ֆունկցիոնալիստական պատկերացումների՝ Ճապոնիայի ուսումնասիրություններում երևան եկան նոր մոտեցումներ, որոնք հասարակությունը դիտում էին որպես փարբեր ինքնություն, արժեքներ ու շահեր ունեցող խմբերի ամբողջություն:

1990-2000թթ. ընթացքում ակնհայտ դարձավ, որ ճապոնական փնտեսության անկումը, Ճապոնիայի «կորսված փասնամյակը»⁶ և 2008թ. սկզբնավորված համաշխարհային ճգնաժամը՝ սոցիալական ռեֆորմների հետ մեկտեղ, հանգեցրել են երկրում սոցիալական ապահովության և կայունության կործանմանը: 1990-ականների վերջերից սկսեցին լայնորեն քննարկվել անապահովությունը, դժվարությունները կրթության համակարգում, դպրոցի և դաստիարակության ճգնաժամի հետ կապված հարցերը: Սա, փաստորեն, նպաստեց կոնֆլիկտաբանական մեթոդաբանության դիրքերի ամրապնդմանը և, ըստ այդմ, զարգացավ այս նոր միտումների վերլուծության մեթոդաբանությունը: Այս նոր մոտեցումը մշակեցին Չիկագոյի համալսարանի պրոֆեսորներ Տ. Նաձիրան և Ն. Նարությունյանը:

Ճապոնական հասարակության հետազոտություններում նախկինում փիրապետող անգլո-ամերիկյան ուսումնասիրությունները հիմնվում էին Ռ. Բելլահի և Է. Վոգելի, իսկ ճապոնականները՝ Ն. Չիեի և Տ. Դոիի ֆունկցիոնալիստական մեթոդաբանության վրա: Բայց կոնֆլիկտի փնտեսության նոր մեթոդաբանությունը սրիպեց հիմնովին վերանայելու «ներդաշնակության պաշտպանների» հայացքները, ուստի հասարակագիտական ուսումնասիրությունները շեղվեցին դասական ճապոնագիտությանը բնորոշ ավանդական արժեքների քննարկումից: 1990-ականներին վերջնականապես հաստատվեց կոնֆլիկտաբանական մեթոդաբանությունը:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմունքներ: Ներազոտության իրականացման ընթացքում հիմք են ընդունվել մի շարք մեթոդաբանական մոտեցումներ և սկզբունքներ, այդ թվում՝ կոնֆլիկտաբանական մեթոդաբանությունը, պարմականության սկզբունքը, համեմատական մոտեցումը, կիրառվել են վերլուծության

⁶ 1991-2000թթ. ճապոնական փնտեսության մեջ փեղի ունեցած անկման և սոցիալական, մշակութային ու փնտեսական հակասությունների սրման պարճառով հայրնի են որպես «կորսված փասնամյակ»:

և համադրման, ինչպես նաև փաստաթղթերի վերլուծության մեթոդները: Փաստաթղթերից վերլուծության են ենթարկվել անգլո-ամերիկյան և ճապոնական գիտական հոդվածները և մենագրությունները՝ զարգացման միտումների, տեսամեթոդաբանական մոտեցումների և ուսումնասիրությունների մեթոդաբանական համապատասխանության բացահայտման նպատակով: Ֆունկցիոնալիստական և կոնֆլիկտաբանական դպրոցների դրույթների համեմատական քննությամբ հնարավոր է դարձել հստակացնել 1990-ականներին առաջադրվող տեսամեթոդաբանական համապատասխանեցման առանձնահատկությունները:

Ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքերը: Արենախոսի համար աղբյուրագիտական հիմք են ծառայել Ճապոնիայի սոցիալ-տնտեսական վիճակագրությունը, նորմատիվ ակտերը, տեղեկատվական գործակալությունների հաղորդումները, ճապոնական և արևմտյան պարբերական մամուլում տպագրված լրագրողական հոդվածները և հեղափոխությունները, համապատասխան գիտաժողովների նյութերը, 1990-2010թթ. ճապոնա-ասիական հասարակության սոցիալական փոփոխությունների և ուսումնասիրության մեթոդաբանության մասին եղած մենագրությունները և գիտական հոդվածները, ճապոնական և արևմտյան համալսարանների, Ճապոնիայի կառավարության և միջազգային կազմակերպությունների կայքերում առկա նյութերը:

Աշխատանքի գիտական նորույթը: Արենախոսությունը պարունակում է գիտական նորույթ հանդիսացող մի շարք հարցադրումներ, դրույթներ և առաջարկություններ, որոնցից հատկապես կարևոր են.

ա/ «մեթոդաբանական համապատասխանեցման» հիմնախնդրի հստակացումն ու հիմնավորումը,

բ/ ֆունկցիոնալիստական և կոնֆլիկտաբանական տեսամեթոդաբանական ավանդույթների համալիր ներկայացումը Ասիայի հասարակությունների գիտական հետազոտության համապեքսությամբ,

գ/ ուսումնասիրության ճապոնական և անգլո-ամերիկյան դպրոցների շրջանակներում մշակված տեսամեթոդաբանական այնպիսի հարցերի համալիր վերլուծությունը, ինչպիսիք են՝ հետազոտությունների տեսամեթոդաբանական համապատասխանեցումը, սոցիալական, տնտեսական, գաղափարական, մշակութային և քաղաքական փոփոխությունների և ակադեմիական-ինտելեկտուալ զարգացման հարաբերակցությունը, «լոկալ հասարակությունների» գիտատնտեսական ուսումնասիրության վրա օտարերկրյա ակադեմիական ազդեցությունը,

դ/ արենախոսի կարծիքով ժամանակակից ճապոնական հասարակության դիսկուրսի հիմնական յուրահավերթությունն այն է, որ ի փարբերություն արևմտյան հասարակության քննարկումների, այն հանդես է գալիս որպես «ազգային պեպոթյան» կամ «էթնոմշակութային պեպոթյանության» դիսկուրս,

ե/ հեթիտորիդային հասարակությունների ուսումնասիրության համար ճապոնա-ասիական հասարակության կոնֆլիկտաբանական մեթոդաբանության և անհավասարության ու սոցիալական ճնշման հեթազոթմանը միտված Ասիայի երկրների ուսումնասիրության հեթազոթային ավանդոթյոթների առաջարկումը,

զ/ ի փարբերություն Ասիայի, Ճապոնիայի և Արևմոթքի հեթազոթային և կոնֆլիկտաբանական ուսումնասիրոթյոթումների՝ ֆունկցիոնալիստական ավանդոթյոթ ընդգծումը նախկին ԽՄՄ երկրների ուսումնասիրոթյոթումներում, մի ավանդոթյոթ, որը պահպանողական է, խուսափում է սոցիալական հակասոթյոթումների վերլոթծոթյոթումներից և շեշտադրում ինտեգրացիան ընդհանուր մշակոթյոթային արժեթքների հիմքի վրա:

Արենախոսոթյան տեսական և գործնական-կիրառական

նշանակոթյոթումը: Աշխատանքի տեսական նշանակոթյոթումը պայմանավորված է Ճապոնիայի ուսումնասիրոթյան ճապոնական և արևմտյան սոցիոլոգիական դպրոցների մշակած տեսամեթոդաբանական մոտեցումների վերլոթծոթյոթամբ և համադրմամբ:

Արենախոսոթյան գործնական-կիրառական նշանակոթյոթումը պայմանավորված է աշխատանքում մշակված տեսամեթոդաբանական գաղափարների և սկզբունքների կիրառելիոթյոթամբ հասարակոթյան փարբեր ոլորտներում, այդ թվում՝ հեթիտորիդային ազգային պեպոթյոթումների ուսումնասիրոթյան, ինչպես նաև տեսամեթոդաբանական ուղղվածոթյոթամբ համալսարանական դասընթացների մշակման համար: Արենախոսոթյան տեսամեթոդաբանական արդյունքները կարող են կիրառվել սոցիոլոգիայի տեսոթյան և մեթոդաբանոթյան խնդիրներին վերաբերող բուհական դասընթացներում: Բացի դա, արենախոսոթյոթումը կարող է հիմք լինել Մերձավոր և Միջին Արևելքի, ինչպես նաև Ասիայի երկրները ներկայացնող ուսանողների համար նախատեսված ուսումնական ծրագրերի մշակման համար, որոնցում արդիական է Արևելքի ժամանակակից հասարակոթյոթումների գիտատեսական քննոթյոթումը:

Արենախոսոթյան ժամանակագրական ընդգրկումը:

Ժամանակագրական առումով աշխատանքն ընդգրկում է 1991-2010թթ. ժամանակահատվածը: Որպես ելակետ ընտրվել է 1991թ.՝ իբրև Ճապոնիայի «կորուսյալ տասնամյակի» (*lost decade*) սկիզբ: «Կորուսյալ տասնամյակ» ասելով նկատի են առնվում 1991-2000թթ., որոնք եղել են ճապոնական տնտեսոթյան աճի անկման, սոցիալական, մշակոթյոթային և տնտեսական հակասոթյոթումների սրման փարիներ: Պարզվում է, սակայն, որ այդ տասնամյակի

զարգացման միպուսները շարունակվել են նաև 2001-2010թթ., ուստի, ներկայումս «կորսված» է համարվում 1991-2010թթ. ընկած ամբողջ ժամանակահատվածը:

Աշխատանքի փորձաքննությունը: Արենախոսությունը փորձաքննության է ենթարկվել Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնում: Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, քննարկվել Երևանի պետական համալսարանի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի 2004-2008թթ. մեթոդաբանական սեմինարներում, սոցիոլոգիայի ֆակուլտետի ամենամյա գիտաժողովներում, Երևանի պետական համալսարանի և Գերմանիայի Կոնստանց համալսարանի դասախոսների և ուսանողների «Սոցիալական փոփոխությունները և մշակութային ինքնությունը» համարեղ գիտաժողովում: Արենախոսության հիմնական դրույթները հեղինակն օգտագործել է ԵՊՏ սոցիոլոգիայի ֆակուլտետի «Արևելքի հասարակություններ» և «Սոցիալական անբարոյություն» դասընթացների նախապարասպան և վարման համար:

Արենախոսության կառուցվածքն ու ծավալը: Արենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից (12 ենթագլուխ), վերջաբանից և օգտագործված գրականության ցանկից: Արենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 128 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿՈՍ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, հստակեցվում են հետազոտության հիմնահարցը, նպատակն ու խնդիրները, հակիրճ բնութագրվում արենախոսության աղբյուրագիտական հիմքերը, կատարվում ուսումնասիրված գրականության տեսամեթոդաբանական մոտեցումների վերլուծություն և նշվում ուսումնասիրության գիտագործնական նշանակությունը:

Ներածությունը ներկայացնում է «մեթոդաբանական համապարասխանություն» հասկացությունը: «Մեթոդաբանական համապարասխանությունը» կամ «աղեկվարությունը» մեկնաբանվում է որպես ճանաչողության համար օգտագործվող մոտեցումների ու մեթոդների կիրառման հետևանքով ձևավորվող գիտելիքի համապարասխանեցում հետազոտվող օբյեկտին, որի շնորհիվ ճանաչվող օբյեկտի տեսական պատկերը ավելի մոտ է արտացոլվող «օրիգինալին»:

Նախկին ԽՍՀՄ երկրներում մարքսիզմի անկումը և «լոկալ անջարտողական ազգայնականության» փիրապետումը հանգեցրել է կոնֆլիկտաբանական մոտեցումների

և Կրթությունների անվտանգությունը: Չնայած նշված հասարակություններում առկա կոնֆլիկտներին՝ այդ թվում՝ սոցիալական բևեռացմանը, արտագաղթին, «նեոգաղութարիտական փոփոխության հասարակությանը», Արևմտյան Եվրոպայից և Նյուսիսային Ամերիկայից ակադեմիական կախվածության աճին, առաջադիմում են ոչ թե կոնֆլիկտաբանական ուսումնասիրությունները, այլ փորձ կարգերի պահպանողական ամրապնդմանն ուղղված ֆունկցիոնալիզմը և «լոկալ անջատողական ազգայնականությունը»: Դրանք չեն կողմնորոշված դեպի սոցիալական անհավասարության և ճնշման վերլուծությունը, ուստի ծագում են մի շարք հարցեր կապված ժամանակակից հասարակության ճանաչողության համար դրանց «էկվիվալենտության» կամ «ճանաչողական համարժեքության» հետ: Ըստ այդմ, ձևավորվում է ճանաչողության փոփոխության փոփոխության համապատասխանեցման հիմնախնդիրը նախկին ԽՍՀՄ երկրներում:

Ներածությունում հիմնավորվում է, որ ճապոնական հասարակության հետազոտության մեջ մասնագիտացած ճապոնական, ինչպես նաև անգլո-ամերիկյան հասարակական գիտությունների փոփոխության փոփոխության սխեմաները կարևոր են, քանի որ «ազգ-պետություն» համակարգի ուսումնասիրություններ են համաշխարհային փոփոխության հասարակության դարաշրջանում: Այդ փոփոխությունից, արենախոսությունը ճապոնիայի կամ «էթնոմշակութային պետականության»⁷ ուսումնասիրության փոփոխության հիմքերի վերլուծություն է:

Արենախոսության ներածության մեջ ցույց է ցուցվում, որ ճապոնիայի և Ասիայի «սոցիալական կարգի» ուսումնասիրությունը արդիական է, քանի որ արևմտյան հասարակության մեթոդաբանական քննարկումների վրա կենտրոնանալու փոփոխություն կարևորվում է լոկալ ավանդույթների և արևմտյան ունիվերսալիստիկական փոփոխությունների համադրումը և փոփոխության-մեթոդաբանական լուծումների որոնումը:

Առաջին՝ **«Մեթոդաբանական համապատասխանեցումը» XX-րդ դարավերջի «ճապոնական հասարակության ուսումնասիրություններում»** գլխում քննվում և ամփոփվում է ճապոնական հասարակության ուսումնասիրությունների փոփոխության ավանդույթի փոփոխությունը XX-րդ դարավերջին:

«Ֆունկցիոնալիզմի անկումը և կոնֆլիկտաբանական մեթոդաբանության ներդրումը ճապոնիայի ուսումնասիրություններում» ենթագլխում (1.1) դիտարկվում

⁷ Բ. Պետերսը առանձնացնում է պետականության երկու փոփոխություն՝ «քաղաքացիական պետականություն» և «էթնոմշակութային պետականություն» (տե՛ս **Peters, B.** A New Look at National Identity // *European Journal of Sociology*, Tome XLIII, 2002, No. 1, էջ 3-4):

է 1980-ականների վերջերին և 1990-ականներին իրականացված «մեթոդաբանական համապարասխանեցումը»:

Արենախոսության մեջ ցույց է տրվում, որ Ճապոնիայի ուսումնասիրության նախորդ գիտական ավանդույթը՝ ֆունկցիոնալիզմը, ընդգծում էր ավանդույթի հիմքի վրա հասարակության սոցիալական ինտեգրացիան, համաձայն որի, եթե արտաքին ցնցումները խախտում էին հավասարակշռությունը (հնդիկ նշանավոր սոցիոլոգ Սրինիվասը Ասիայի հասարակություններում կոնֆլիկտները համարում էր արևմտյան ազդեցության արդյունք), ապա հասարակությունը կայունանում էր ավանդական արժեքների և նորմերի շուրջ համախմբման ճանապարհով:

Արենախոսը պարզաբանում է, որ գիտական հետազոտության ֆունկցիոնալիստական ավանդույթը ձևավորվել է արևմտյան ազդեցության պարզաբանված վերացման վրանգի առջև կանգնած և իրենց գոյությունը պահպանել ցանկացող «ավանդական հասարակությունների» և «լոկալ մշակույթների» ուսումնասիրությանը նվիրված հետազոտություններում: Այդ ուղղության դասական հեղինակները (օրինակ՝ Բ. Մալինովսկի, Ա. Ռ. Ռադկլիֆ-Բրաուն) քննում էին արդի համաշխարհային համակարգից մեկուսացած, արտաքին ազդեցությունից զերծ և, հետևաբար, սեփական մշակութային ավանդույթների հիմքի վրա ինտեգրված «լոկալ մշակույթների» «ռոմանտիկ հավերժությունը»:

1960-70-ականներին ֆունկցիոնալիզմը այն հիմնական տեսությունն էր, որի հիմքի վրա հասարակական գիտությունների ներկայացուցիչները ուսումնասիրում էին Ճապոնիան: Այն հիմնվելով 1950-60-ականների Նոդկասարանի և Ճապոնիայի զարգացման փորձի վրա, ցույց էր տալիս, թե ինչպես է համակարգը ավանդույթի օգնությամբ պահպանում իր հավասարակշռությունը և կայունությունը: Նասարակական գիտությունների ներկայացուցիչները՝ առաջնորդվելով ֆունկցիոնալիզմով, փորձում էին պարզել, թե հասարակական ինտեգրությունները ինչպես են կարողանում հարմոնիայի և համագործակցության մշակութային արժեքների հիմքի վրա ինտեգրել հասարակությունը: Դրա դրսևորումներից էին Պ. Սթեյնհոֆի առաջին շրջանի, Ռ. Բելլահի, Է. Վոգելի աշխատությունները, որոնք նվիրված էին ինտեգրացիայի և ոչ թե կոնֆլիկտի ուսումնասիրությանը⁸:

⁸ Տե՛ս **Bellah, R. N.** Tokugawa Religion: The Values of Pre-Industrial Japan. Illinois: The Free Press, 1957. **Steinboff, P.** Tenkō: Ideology and Societal Integration in Prewar Japan. Harvard Studies in Sociology. New York: Garland Publishing Company, 1991:

Արենախոսության մեջ ցույց է տրվում, որ արդեն 1980-ականներին հասարակական գիտությունների ներկայացուցիչները սկսեցին հարցականի փակ դնել ֆունկցիոնալիստական մոտեցումը: Նրանք արձանագրեցին ճապոնական հասարակությունում առկա բազում կոնֆլիկտներ, որոնց մեկնաբանության համար հասարակության մշակութային ներդաշնակության փոփոխությունները չունենին բավարար բացատրություն: Ըստ այդմ, 1980-ական թվականների վերջին Ճապոնիայի ուսումնասիրություններում փոխվում է փոփոխությունների ավանդույթը՝ պայմանավորված հասարակական, մշակութային, փոփոխական և քաղաքական փոփոխություններով: Այդ նույն ժամանակ ԱՄՆ-ում և Եվրոպայում ընթացքի մեջ էր հասարակական գիտությունների «մեթոդաբանական համապարասխանացումը»: Արդյունքը եղավ այն, որ ի հակադրություն ֆունկցիոնալիզմի փիրապետության դարաշրջանի, ծնվեցին նոր փոփոխություններ, որոնք հասարակությունը դիտում էին որպես փոփոխության շահեր և արժեքներ ունեցող խմբերի ամբողջություն: Ըստ այդմ, հասարակական գիտությունները սկսեցին հիմնականում ուշադրություն դարձնել ինքնության և սոցիալական խմբերի, այդ թվում մարզինալ և ճնշված խավերի փոփոխությունների վրա:

1990-ականների սկզբներին Ճապոնիայի ուսումնասիրություններում գերակայող մշակութային վերլուծություններում ձևավորվեց նոր մոտեցում, որը առաջին անգամ կիրառեցին Արևելյան Ասիայի զարգացման փոփոխություններ S. Նաձիփան և Ն. Նարությունյանը: Վերջիններիս ուսումնասիրությունները առանձնանում էին հարկապետ այն բանով, որ կոնֆլիկտների արտահայտման համար կարևորում էին «ենթամշակույթները» (*subculture*), սոցիալական խմբերի «մշակութային ինքնությունը» (*cultural identity*) և փոփոխությունները:

Կոնֆլիկտաբանական այս նոր փոփոխականարգը սփիպեց հիմնովին վերանայելու հասարակության մեջ մշակութային ներդաշնակության կողմնակիցների հայացքները և հասարակության ու մշակույթի մասին ձևավորեց նոր ըմբռնում:

Արենախոսը ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ «Ասիական ուսումնասիրությունների մարենագիտության» համաձայն՝ Արևմուտքում իրականացված Ճապոնիայի կոնֆլիկտաբանական ուսումնասիրությունների 21%-ը փայտազրվել է 1945-1983թթ., իսկ 79%-ը՝ 1984 թվականից հետո: Ընդ որում՝ 1946-1980թթ. բաժին է ընկնում կոնֆլիկտաբանական մեթոդաբանությամբ գրված մագիստրոսական թեզերի և արենախոսությունների միայն 4%-ը, իսկ մնացած 96%-ը ստեղծվել է հետագա

վարիներին⁹: Ուշագրավ է նաև այն իրողությունը, որ համաձայն ճապոնեցի աղբյուրների՝ սկզբնական շրջանում ճապոնական սոցիոլոգիան ունեցել է գերազանցապես մարքսիստական կողմնորոշում, սակայն հաջորդ երեք տասնամյակներում փիրապետող է դարձել ֆունկցիոնալիզմը: Այսպիսով, պարզաբանում է ավերակառույց, հետպատերազմյան վարիներին ճապոնական կոնֆլիկտաբանական մեթոդաբանության մեջ գերակշռում էր մարքսիստական կոնֆլիկտաբանությունը, 1970-80-ականներին փիրապետող է դարձել ֆունկցիոնալիզմը, իսկ 1990-ականներից հետո և հավկապես 2000-2008թթ. կտրուկ աճել է հետմոդեռնիստական կոնֆլիկտաբանական մեթոդաբանության դերը, որի դիրքերից էլ ներկայումս իրականացվում է ուսումնասիրությունների «մեթոդաբանական համապարասխանեցում»: Սա արդյունք էր XX դարավերջի և XXI դարասկզբի ճապոնիայում ինչպես ապահովության և կայունության կործանման, այնպես էլ ճապոնիայից դուրս և ճապոնական ակադեմիայում գիտական հետազոտությունների նոր փեսամեթոդաբանական հիմքերի ձևավորման:

«Քննադատական մտածողության դերի նոր ընդգծումը 1990-ականներին»

Ենթազիխում (1.2) ցույց է տրվում, որ կոնֆլիկտաբանական մեթոդաբանության ներմուծման հետ մեկտեղ ճապոնական համալսարաններում ընդգծվում է քննադատական մտքի կարևորությունը: Ըստ այդմ, քննադատական մտածողությունը սահմանվում է որպես «ռացիոնալ և ռեֆլեկտիվ մտածողություն», որը մերժում է ընդհանուր տարածում ունեցող կարծիքների ստրկամիտ ընդունումը¹⁰:

Ենթազիխում ընդգծվում են համալսարանական կրթության ոլորտում Ասիայում և ճապոնիայում գոյություն ունեցած երկու հիմնական մոտեցումները՝ դեպի ավանդական մշակույթը և գաղափարախոսությունը համալսարանական կրթության կողմնորոշվածությունը, երկրորդ, քննադատական մտածողության և գիտության գերակայությունը: Այս երկու հակադիր միտումները որոշ իմաստով սպեղծում են անորոշություն: Բանն այն է, որ քննադատական մտածողությունը, նոր գաղափարները և նորարարությունը խիստ անհրաժեշտ են փոփոխության կենսունակության համար և, ընդհակառակը, մերժելով վարքի և մտածողության ավանդական ձևերը, սպառնում են ճապոնական հասարակության կայունությանը, որովհետև շեշտը դնում են ոչ թե խմբին հարմարվելու և խմբի ներսում ներդաշնակության պահպանման, այլ ընդհանուր տարածում ունեցող կարծիքների և կոնվենցիոնալ գիտելիքի մերժման վրա: Ավերակառույց

⁹ Տե՛ս <<Bibliography of Asian Studies, 1971-2010>> // <http://quod.lib.umich.edu/b/bas/> [վերջ. այց. 03.01.2010, ժ. 17:38]:

¹⁰ Տե՛ս **Rear D.** Critical Thinking and Modern Japan // *Electronic Journal of Contemporary Japanese Studies*, March, 2008 // http://www.japanesestudies.org.uk/contents/contents_year.html#2008/ [վերջ. այց. 01.02.2012, ժ. 23:35]:

կարծիքով, XXI-րդ դարի ճապոնիայում փիրոդ այս անորոշությունը լավագույնս երևում է կրթության քննարկումներում. մի կողմից համաշխարհային մրցակցությունը և փոփոխական ճգնաժամի հաղթահարումը կառավարությունից և գործարար աշխարհից պահանջում են քննադատական միտք, իսկ մյուս կողմից, ծնում անթաքույց վախ ճապոնական ավանդական «ազգային կարգի» և արժեհամակարգի վրա դրա ունենալիք բացասական ազդեցության հանդեպ:

«Կրթության ռեֆորմը և արժեքների համար պայքարը» ենթագլխում (1.3) հասարակում է, որ ճապոնիայի թե՛ կառավարությունը, և թե՛ գործարար աշխարհը հեղափոխված են երկրի բարձրագույն կրթության և հիմնարար գիտական հետազոտությունների զարգացման հիմնախնդրով: Ներկայացնելով այս երկու խմբերի դիրքորոշումները՝ արենախոսը ցույց է փայլիս, որ գործարար աշխարհը դարձել է գործնական պարկերացումներով, իսկ կառավարության մոտեցումը հիմնականում գաղափարախոսական է, ուստի միտված է ազգայնական ու սոցիալական կառավարման:

Ըստ այդմ, արենախոսը գտնում է, որ թեև դեպի գաղափարախոսություն, ազգայնականություն և ազգային բնավորության ձևավորում կողմնորոշված մոտեցումները կրթության համակարգում ընդգծում են ավանդական մշակութային արժեքների դաստիարակման կարևորությունը, այդուհանդերձ, 1990-2010թթ. փեղի ունեցած «ազգային կարգի նահանջի» հետ մեկտեղ մեծացել է ավանդական ինստիտուտների հանդեպ քննադատական մոտեցումը, ի հայտ է եկել արևմտյան ինդիվիդուալիզմի և քննադատական մրաժողության հանդեպ հանդուրժողական վերաբերմունք:

Երկրորդ գլխում՝ **«Ազգային կարգի նահանջը» և հետպատերազմյան արդիականացման դարաշրջանի սոցիալական կարգի քննադատությունը**, հիմք ընդունելով ճապոնիայում 1990-2010թթ. փեղի ունեցած հասարակական, փոփոխական և քաղաքական իրադարձությունները, կրթության և դաստիարակության քննարկումները, այդ փոփոխության սոցիալ-փոփոխական վիճակագրությունը և հասարակագիտական ուսումնասիրությունները՝ հեղինակը ներկայացնում է XX դարավերջի և XXI դարասկզբի ճապոնիայի սոցիալական փոփոխությունների հիմնական ուղղությունը և 1990-2010թթ. մասնագիտական գնահատականները: Երկրորդ գլխում հեղինակը ներկայացնում է նաև հասարակության ավանդապահ շերտերի կարծիքը ճապոնիայում «ազգային կարգի նահանջի» մասին:

««Ազգային կարգի նահանջը» 1990-ականներին» ենթագլխում (2.1), հաշվի առնելով թե՛ փոփոխական անկումը, և թե՛ սոցիալական, մշակութային, գաղափարական և

քաղաքական փոփոխությունները, արենախոսը քննում է «ազգային կարգի նահանջ» հասկացությունը, ցույց տալով, որ Կարգի հեղինակներ այդ հասկացության փակ նկարի են առնում ճապոնական հասարակությունում «ավանդույթից օտարված ենթամշակույթների ձևավորումը», հեղափոխության արդիականացման ավանդույթների անկումը 1990-ականներին, այսպես կոչված «բարոյա-արժեքային ճնհալը», փոփոխական դժվարություններին ուղեկցող սոցիալական բեռնացումը և այլն:

1990-ականների «ազգային կարգի նահանջի» դրսևորումներից մեկն էլ ճապոնական «մասսայական միջին շերտի հասարակության» փոփոխության քննադատությունն էր: Այդ փաստանշակում ակնհայտ էր, որ ճապոնական «էթնոմշակութային պեղակապետությունը» դժվարանում էր իր ավանդական արժեքներն ու գաղափարները փոխանցել ազգաբնակչության մի մեծ հատվածի, որն իր կյանքի իմաստը վերագրել էր ռադիկալ աղանդներին միանալով: Քննադատությունը սա համարեց «ազգային կարգի նահանջի» դրսևորումներից մեկը:

Այս ենթագլխում արենախոսը քննում է նաև հիմնական քաղաքական հոսանքների՝ նոր-ազգայնականների (նեոլիբերալների) և նոր-ազգայնականների հայացքները: Նոր-ազգայնականների կարծիքով, հեղափոխության և մասնավորապես 1990-2010թթ. ճապոնական պեղակապետությունը արատավոր է, որովհետև հիմնվում է փոփոխական շահի վրա: Նեոլիբերալների կարծիքով էլ ճապոնական պեղակապետությունը ձախողվել է, քանի որ առաջնորդվում է նեոմիսթ քաղաքականությամբ, որի փակ նրանք հասկանում են խոր պայմանական արմատներ ունեցող ինքնամեկուսացման ավանդույթը:

Նեոլիբերալները կարծում են, որ համաշխարհային ուժերի մուտքը երկիր և նրա միջազգայնացումն ու համաշխարհայնացումը օգնել են ճապոնիային: Նախառակ այս դիրքորոշման, նոր ազգայնականները միջազգայնացումն ու համաշխարհայնացումը համարում են «ազգային կարգի նահանջի» հիմնական պատճառը և դրա համար մեղադրում լիբերալներին:

2.1 ենթագլխում վերլուծվում է նաև երիտասարդության խնդիրը: 1990-ականների համար բնութագրական էր երիտասարդության բարձր գործազրկությունը (9%)¹¹ և ֆուրիտաների (*futureeas*) դասի ձևավորումը: Վերջինս երիտասարդության այն հատվածն է, որը չունի լուրջ ձգտումներ, աշխատանքային ծրագրեր, անարարքեր է «լավ աշխատանքի» հանդեպ և նրա անցումը մի աշխատանքից մյուսը սոցիալական սփորին շերտի ձևավորման նշան է:

¹¹ Տե՛ս **The Global Economy** // <http://www.theglobaleconomy.com/Japan/indicator-SL.UEM.1524.ZS> [վերջ. այց. 08.08.2013, ժ. 14:16]:

Ենթագլխի վերջում, ընդհանրացնելով քննվող աղբյուրները, արենախոսը պարզաբանում է, որ մեծաթիվ հասարակագիտական ուսումնասիրություններում և մամուլում XX դարավերջի և XXI դարասկզբի Ճապոնիան բնութագրվում է որպես «կազմալուծվող ազգային-փնտեսական համակարգ և քայքայվող հասարակական կարգ»¹²:

«Մանկության և դաստիարակության վերլուծությունները որպես սոցիալական քննադատության հատուկ բնագավառ» ենթագլխում (2.2) հեղինակը ցույց է տալիս, որ Ճապոնիայում մանկության մասին գիտելիքները համարել են հատուկ կարգի և օգտագործել ճապոնական «Էթնոմշակութային պետականության» ըմբռնման համար: Արենախոսությունում, հիմք ընդունելով XX դարավերջի մանկության և դաստիարակության բանավեճը՝ հեղինակը շեշտում է, որ Ճապոնիայի գերփրությունը դառնալու դարաշրջանում երեխաները դարձել էին «աշխատանքի և սպառման օբյեկտ», երկրորդ, նա ընդգծում է, որ ուսումնասիրությունները բացահայտում են «մանկության ինտրոմենտալությունը» արդի հասարակությունում, այսինքն՝ արդի Ճապոնիայում երեխաները դարձել են ազգային ծրագրեր իրականացնողներ: Շուրջօրյա լարված ուսուցումը և պարասխանաբանության զգացումը երեխաների մտավոր և ֆիզիկական առողջության վրա ունեցել են բացասական ազդեցություն, ուսրի շարք հեղինակներ այս երևույթը անվանում են «երեխաների մանկության հափշտակում»¹³:

**«Ավանդապահական արձագանքը «ազգային կարգի նահանջին»:
«Ակադեմիական ապարտեիդի» և «անզերենի լեզվական ինտելեկտիզմի»
քննարկումները XX դարի վերջին»** ենթագլխում (2.3) դիտարկվում են օտարերկրացի դասախոսների վարումները 1990-ականներին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ակնկալվում էր օտարերկրացիների լայն մասնակցությունը Ճապոնիայի զարգացմանը: Այսուհանդերձ, Ճապոնիայում դրսևորվել է խտրականություն և կրթության ու հասարակության կառուցման ընթացքում Ճապոնիան խուսափել է փարբեր էթնիկ պարականություն ունեցող մասնագետներից և սահմանափակել արևմտյան լեզուների փարածումը: Դրսևորելով «ակադեմիական ապարտեիդ» (*academic apartheid*)՝ երկիրը մերժել է այն մասնագիտական որակներն ու իրազեկությունը, որոնք հիմնված են ազգային, էթնիկ, մշակութային և մարդկային բազմազանության վրա: Սա ճապոնական համալսարաններին զրկել է այն գիտական

¹² Yoda, T. A Roadmap to Millennial Japan // *The South Atlantic Quarterly*, Vol. 99, No. 4, 2000, p. 635.

¹³ Մանրամասն փնտ՝ Field, N. The Child as Laborer and Consumer: The Disappearance of Childhood in Contemporary Japan // *Children and the Politics of Culture* // Edited by Sharon Stephens, Princeton, 1995, էջ 51-76.

ներուժից, որի համար արևմտյան համալսարաններն իրականացնում են դասախոսների և հեղափոխողների համաշխարհային հավաքագրում:

Այս ենթագլխում վերլուծվում են նաև վերջին փասանհինգ փարիներին անգլերենի դերի շուրջ փետի ունեցած ճապոնական բանավեճերը:

1999-2000թթ. անգլերենի իրենց իմացությամբ ճապոնացիները ամենավերջին փեղերում էին Ասիայում¹⁴: Ըստ մասնագետների՝ Ճապոնիայում անգլերենի դասավանդումը գլխավորապես ուղղված է քերականության և թարգմանության ուսուցմանը, որի նպատակը այնպիսի փեղելությունների սրացումն է, որոնք անհրաժեշտ են գիրա-փեղնոլոգիական զարգացմանը: Ավելի պահպանողական շրջանակները կարծում են, որ «անգլերենը բռնության գործադրում է Ճապոնիայի հանդեպ»¹⁵:

Այսուհանդերձ, հիմնվելով կրթական վիճակագրության վրա, արենախոսը ցույց է փալիս, որ Ճապոնիայում խորանում է այն գիրակցությունը, որ արևմտյան մասնագետներն ու անգլերենի իմացությունն անհրաժեշտ են ավելի ու ավելի մեծ համաշխարհային հաղորդակցության վրա հիմնված և միջազգային կողմնորոշում ունեցող աշխարհաբնների կարարման համար:

Ամփոփելով վերը նշված հարցերի քննարկումը արենախոսը եզրակացնում է, որ 1990-ական թվականների «ակադեմիական ապարտեիդը» և «անգլերենի լեզվական իմպերիալիզմի» (*English linguistic imperialism*) հետ կապված մրահոգությունները հետևանք էին մշակութային ինքնության կորստի վախի: Ճապոնական պետությունը համաշխարհայնացվում է և Ճապոնիայում մրահոգված են, որ թուլանում է կապն անցյալի հետ: Ճապոնիան ավելի ու ավելի է հայրնվում ազգային սահմաններ չճանաչող աշխարհաքաղաքացիական գաղափարի ազդեցության փակ, բայց, այս անգամ, նրա օգնությամբ, ինչն անվանում են «գլոբալիզմ», «ինտերնետ» և «անգլերենի լեզվական իմպերիալիզմ»: Որպես արձագանք այս հոսանքի՝ XX դարավերջի ճապոնական հասարակության մեջ փետի ունեցավ ազգայնականության և պահպանողականության աճ:

Երրորդ գլխում՝ **«Ինքնասպանությունները Ճապոնիայում: Ինքնասպանությունների Ֆունկցիոնալիստական և կոնֆլիկտարանական մեկնարանությունները»**, արենախոսը վերլուծում է ինքնասպանությունների

¹⁴ Տե՛ս **Noriguchi, S.** Japan Needs to Improve English Education System // *China Daily*, March 30, 2007 // http://www.chinadaily.com.cn/condy/2007-03/30/content_839890.htm [վերջ. այց. 15.04.2013, 20:24]: Տե՛ս նաև Cram-Free Policy Ditched in Plan for High Schools // *The Yomiury Shimbun*, Dec. 23, 2008.

¹⁵ **Suzuki, T.** Giving English Education a Firmer Focus: An Interview with Suzuki Takao // *Japan Echo*, Vol. 26, No. 5, October 1999, p. 24.

ուսումնասիրության գիտաբանական հիմքերի փոփոխությունը 1980-90-ական թվականներին:

«Ինքնասպանությունների ֆունկցիոնալիստական վերլուծությունը ավանդական հասարակության համակարգում» ենթագլխում (3.1) հեղինակը քննելով «ճապոնական ինքնասպանության մշակույթը» (*Japanese suicide culture*)¹⁶, եզրակացնում է, որ «ճապոնական ինքնասպանության մշակույթի» ձևավորման նախադրյալները ավանդական հասարակությունում սոցիալական բարձր ինտեգրացիան և պարտքի զգացումն էին: Ծերերի կամավոր մահը սննդային ռեսուրսների պակասի պայմաններում և աղքատության մեջ, երբ մեռնելով խնայում էին ընտանիքի համար, փարածված էր սովի և աղքատության ժամանակներում՝ ճապոնիայի խստաշունչ կլիմայով պրեֆեկտուրաներում:

Նեղինակը ընդգծում է, որ ավանդական ճապոնիայի ուսումնասիրություններում «ինքնասպանություն» հասկացության օգրագործումը պայմանական է, քանի որ այն եվրոպական արմատներ ունի և արտահայտում է արևմտյան հասարակագիտական ավանդույթը: Ֆրանսիացի Է. Դյուրկհայմի արևմտյան հայեցակարգը, որն ինքնասպանությունը բխեցնում է հասարակության ցածր ինտեգրացիայից, կիրառելի չէ մինչարդյունաբերական ճապոնիայում «ինքնասպանության մշակույթի» ուսումնասիրության համար:

«Ինքնասպանությունների կոնֆլիկտաբանական քննությունը ժամանակակից ճապոնիայում» ենթագլխում (3.2) դիտարկվում են ժամանակակից ճապոնական հասարակությունում ինքնասպանությունների ուսումնասիրության երկու առանցքային թեմաները՝ առաջին, ծերերի ինքնասպանությունները 1990-ականներին, երկրորդ, թվային փոփոխությունների և ինքնասպանությունների փոխազդեցությունը:

«Ծերերի ինքնասպանությունները 1990-ականներին» ենթակետում (3.2.1) վերլուծվում է ծերերի ինքնասպանությունների ճապոնական վիճակագրությունը: Նամաձայն այդ վիճակագրության՝ 2008-2009թթ. 65 և ավելի փարեկանները կազմել են ճապոնիայի ամբողջ ազգաբնակչության 21.5%-ը, սակայն նրանց ինքնասպանությունները կազմում են ինքնասպանությունների ընդհանուր թվի 29%-ը¹⁷, իսկ 60 և ավելի փարեկանների ինքնասպանությունները 2007թ-ին կազմել են 36.6%¹⁸:

¹⁶ «Ճապոնական ինքնասպանության մշակույթի» մասին մանրամասն փնջում **Pinguet, M.** Voluntary Death in Japan. Cambridge: Polity Press, 1993:

¹⁷ Տե՛ս **Yuasa, S.** Record Number of Japanese Elderly Kill Themselves. *Associated Press*, June 19, 2008 <http://www.foxnews.com/2008Jun19/0,4675,JapanElderlySuicide> [վերջ. այց. 20.12.2008, ժ. 13:36]:

¹⁸ Տե՛ս նույն փնջը:

Ենթակետում ցույց է տրվում, որ ծերերի ինքնասպանությունների կառուցվածքային հիմքերը ձևավորվել են Ճապոնիայի արդիականացման երկու կարևոր ժամանակահատվածներում, առաջին՝ Մեյձի (1868-1912) և, երկրորդ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմին հետևած արդիականացման դարաշրջաններում, երբ ստորադասվեց ընդհանր և ընդգծվեց աշխատելու և աշխատուժի ձևավորման անհրաժեշտությունը: Ֆինանսա-տնտեսական հզորության ձևավորման այս երկու դարաշրջաններում ավանդական ընդհանր քայքայվեց, որովհետև երիտասարդները աշխատելու համար թողեցին գյուղերը և տեղափոխվեցին քաղաքներ, ուստի ծերերը զրկվեցին ընդհանր աջակցությունից:

Տիմոտևով ծերերի ինքնասպանության մասին մենագրությունների, ինչպես նաև մամուլի և լրատվական գործակալությունների հաղորդումների վրա, արենախոսը եզրակացնում է, որ երիտասարդները գերադասում են անկախ ապրելակերպը, խոշոր քաղաքներում գգում բնակելի տարածքի պակաս, հեռանում ծնողներից, որից ավելի է վախճանում տարեցների վիճակը¹⁹:

Նամենաբելով Ճապոնիայի և Նարավային Կորեայի վիճակագրությունը՝ հեղինակը ցույց է տալիս, որ այդ հասարակություններում ծերերի ինքնասպանությունների միտումները համընկնում են: Նարավային Կորեան «Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության» անդամ երեսուն երկրների մեջ ունի ծերերի ինքնասպանության ամենաբարձր մակարդակը: Վերլուծաբանները սա համարում են Նարավային Կորեայում ավանդույթների քայքայման արդյունք, երբ երիտասարդ սերունդն իրեն այլևս պատասխանատու չի գգում ծեր ծնողների խնամքի համար²⁰: Նույնը ճշմարիտ է նաև Ճապոնիայի համար:

Նեղինակը վիճարկում է վերջին շրջանի բժշկագիտական ուսումնասիրություններում գերիշխող այն տեսակետը, համաձայն որի ծերերի ինքնասպանության գլխավոր պատճառը դեպրեսիան է²¹: Նարցը քննելով սոցիոլոգիական տեսանկյունից ցույց է տրվում, որ այն պատճառները, որոնք առաջ են բերում դեպրեսիա և ծերերի ինքնասպանություն, արդյունք են 1960-80-ականներին տեղի ունեցած Ճապոնիայի ֆինանսա-տնտեսական հզորության ձևավորման, ուրբանացման, արևմտականացման և այդ տեսակետի փոփոխությունների հետևանքով XX դարավերջին սկսված «ազգային կարգի նահանջի»:

¹⁹ Տե՛ս **Kimura, R.** Bioethical and Socio-Legal Aspects of the Elderly in Japan // Law in East and West. Waseda University Press, Tokyo, 1988, էջ 175-200:

²⁰ Տե՛ս Elderly Suicide Snowballs in S. Korea: Statistics (Ed.) // *The Seoul Times*. July 9, 2009:

²¹ Տե՛ս **Oyama, H., Fujita M., Goto M., Shibuya H. and Sakashita T.** Outcomes of Community-Based Screening for Depression and Suicide Prevention Among Japanese Elders // *The Gerontologist*, Vol. 46, No. 6, 2006, էջ 821-826:

«ԹՎԱյին փեխնոլոգիաների և ինքնասպանությունների առնչությունների վերլուծություն» ենթակետում (3.2.2) լուսաբանվում է ինքնասպանությունների և թվային փեխնոլոգիաների փոխազդեցությունը:

Արդի ճապոնիայում թվային փեխնոլոգիաների օգնությամբ իրականացվող ինքնասպանությունները մեկ րոպեից էլ փոքր են, սակայն փարեկան աճը (60%) բարձր է²²: Ինտերնետի օգնությամբ ձևավորվող խմբերի ինքնասպանությունը անհանգստացնող է, ուստի դարձել է լայն քննարկումների առարկա: Արենախոսության այս բաժնում հեղինակը ընդգծում է, որ ինքնասպանության ինտերնետային համաձայնությունները արտահայտում են բարոյաարժեքային այն ճգնաժամը, որն առկա է Ասիայի այն հասարակություններում, որոնք արդիականացվում և փնտրեսական ծանր մրցակցության մեջ են մտնում Արևմուտքի հետ: Մասնագետները թվային փեխնոլոգիաները չեն համարում խմբային ինքնասպանությունների իրական պատճառը (իրական պատճառը հասարակության մեջ գոյություն ունեցող հակասություններն են), սակայն, դրանով հանդերձ, այս փեխնոլոգիաները դյուրացնում են ինքնասպանությունները, քանի որ օգնում են ձևավորել ինքնասպանների խմբեր:

Չորրորդ գլխում` **«Ազգային կարգի նահանջը և բարձրագույն կրթության ճգնաժամը»**, հեղինակը քննում է հեղափոխական ավանդույթի փոփոխությունը ճապոնական կրթության ուսումնասիրություններում և ներկայացնում բարձրագույն կրթության նոր ուսումնասիրությունները:

1960-80-ականները ճապոնիայի հանդեպ հիացական վերաբերմունքի փաստանյալներ էին, սակայն 1990-ականներին «ազգային կարգի նահանջը» սրիպեց որդեգրել նոր քննադատական մոտեցում, որն արտահայտվեց Բ.Մաքվեյի «Բարձրագույն կրթության միֆը ճապոնիայում» ուսումնասիրության մեջ, որտեղ ցույց է փրվում, որ քննությունների վրա կենտրոնացած ճապոնական համալսարանական կրթությունը ուսանողների մեջ ձևավորում է այն պատկերացումը, որ ուսումը քննություններին նախապատրաստվելը և դասախոսություններին ներկա լինելն է, իսկ սովորելը ոչ այլ ինչ է, քան անգիր անելու վրա հիմնված «ինտեր» փաստերի մտապահում²³:

«Ճապոնական կրթության հիմնախնդիրների ընդհանուր քննություն» ենթագլխում (4.1) համեմատվում է բարձրագույն կրթությունը` հիմնվելով նեղ մասնագիտական ուսումնասիրությունների, նորմատիվ փաստաթղթերի և կրթության ու գիտահետազոտական համակարգի վիճակագրության վրա:

²² Տե՛ս **Ryall, J.** Internet Suicide Pacts Shock Japan // *The Scotsman*, May 28, 2003:
²³ Տե՛ս **McVeigh, B. J.** Japanese Higher Education as Myth. N.Y.: M.E. Sharpe, 2002:

Ըստ այդմ, արվում է ճապոնական կրթության և, ի մասնավորի, բարձրագույն կրթության ընդհանուր բնութագիրը: Ծապոնացիները հաջողակ են գրաճանաչության բարձր մակարդակ ապահովելու մեջ՝ գրաճանաչ է ճապոնիայի ազգաբնակչության 99 %-ը: Անհամեմատ բարձր է նաև բարձրագույն կրթության ձգտումը: Ծապոնիայում համալսարաններ է հաճախում 18-22 տարեկանների 50 %-ը (Մեծ Բրիտանիայում՝ 13%-ը²⁴):

Այսուհանդերձ, ճապոնական բարձրագույն կրթությունը, հիմնարար գիտությունը և ակադեմիան ունեն իրենց թերությունները: Նորելյան մրցանակի դափնեկիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2004թ. դրությամբ ճապոնիան ուներ ընդամենը 5 դափնեկիր, այն դեպքում, երբ Մեծ Բրիտանիան ուներ 64, Գերմանիան՝ 60, Ֆրանսիան՝ 24, Ռուսաստանը՝ 10, Իտալիան՝ 7 դափնեկիր: Ավելորդ է խոսել Միացյալ Նահանգների մասին, որն ուներ Նորելյան մրցանակի 156 դափնեկիրներ²⁵: Տիմարար հետազոտությունների բնագավառում ճապոնիան լրջորեն հետ է մնում, այնպեղ անհամեմատ թույլ են զարգացած մագիստրոսական ուսուցումը և հետբուհական կրթությունը: 1993-2008թթ. վիճակագրությունը ցույց է տալիս, որ Միացյալ Նահանգներում և Մեծ Բրիտանիայում յուրաքանչյուր 1000 բնակչին բաժին է ընկնում 4-7 մագիստրոս, իսկ ճապոնիայում՝ 1.8²⁶: Արդյունաբերական զարգացած երկրների ՆՆԱ-ի մեջ այդ երկրների կառավարությունների կողմից գիտական հետազոտությունների և մշակումների ծախսերի (*R&D Expenditure*) տեսակարար կշիռը 2003թ. եղել է հետևյալը. Ֆինլանդիա՝ 0.96%, Շվեդիա՝ 0.93%, Ֆրանսիա՝ 0.80%, Գերմանիա՝ 0.77%, ԱՄՆ՝ 0.74%, Սիդեյլանդներ՝ 0.72%, Ճապոնիա՝ 0.58% և այլն²⁷: Ըստ Ժ. Լեմանի՝ ճապոնիայի կրթության համակարգը չի խրախուսում քննադատական և սրեղծագործական միտքը:

Այս ենթագլխում ընդգծվում է ճապոնիայի զարգացման հիմնական պարադոքսը՝ նրա փնտեսական գերտերություն դառնալը չի հիմնվել սեփական բարձր զարգացած հիմնարար գիտության և քննադատական-վերլուծական մտքի վրա: Նամաձայն Ն. Ռոսովսկու՝ բոլոր գերժամանակակից գիտահետազոտական հզորություններ ունեցող համալսարանների երեք-քառորդը կենտրոնացած է Միացյալ Նահանգներում, իսկ

²⁴ Տե՛ս **Pool, G. S.** Higher Education Reform in Japan: Amano Ikuo on “The University in Crisis” // *International Education Journal*, Vol. 4, No 3, 2003, էջ 154:

²⁵ Տե՛ս Nobelprize.org: The Official Web Site of the Nobel Prize // http://nobelprize.org/nobel_prizes/lists/ [վերջ. այց. 01.09.2011, ժ. 19:21]:

²⁶ Տե՛ս Analysis on Graduate Education in Japan. National Institute of Science and Technology Policy Report: Concise Summary, No. 124, March, 2009, էջ 16:

²⁷ Տե՛ս **Gannon, F.** Government Rhetoric and Their R&D Expenditure // *EMBO Reports*, Vol. 4, No. 2, 2003, էջ 117:

Ճապոնիայում կա նման համալսարանների միայն մի փոքր խումբ, որը համաշխարհային դասակարգման ոչ առաջավոր դիրքերում է²⁸:

«Ճապոնական համալսարանների քննադատությունը: Նամալսարանների ինֆեգրացիան կորպորատիվ Ճապոնիայի փնտեսական համակարգի մեջ» ենթագլխում (4.2) ներկայացվում է կրթության սոցիոլոգիայի բնագավառի ճապոնացի ամենահայտնի հեղինակի՝ Տոկիոյի համալսարանի պրոֆեսոր Ի. Ամանոյի իրականացրած քննադատությունը: Ըստ նրա՝ Ճապոնիայի համալսարանների ճգնաժամը կապված է ճապոնական գիտության և կրթության զարգացման հետևյալ միտումների հետ. առաջին՝ համալսարանների «մարքեթիզացիա» կամ շուկայական հարաբերությունների որդեգրում բարձրագույն կրթության բնագավառում, երկրորդ՝ համալսարանների ազատականացում, երրորդ՝ «կրթական վկայականների հասարակության» կամ կրթական «կրեդենցիալների» հասարակության ձևավորում, չորրորդ՝ «քննական դժոխք», հինգերորդ՝ համալսարանների և արդյունաբերության համագործակցության բացակայություն, վեցերորդ՝ անգլո-ամերիկյանի համեմատությամբ ճապոնական համալսարանների թույլ գիտահետազոտական հզորություններ:

1984թ. վարչապետ Յասուիիրո Նակասունեն (1982-1987) փորձում էր կյանքի կոչել իր համընդհանուր մասնավորեցման քաղաքականությունը և հիմնեց «Կրթության հարուկ խորհուրդը»՝ կրթության ռեֆորմների քննության համար: Խորհրդի 1984թ. գեկույցը քննադատում էր համալսարանների միափափայությունը, առաջարկում ազատականացնել համալսարանները և ազգային համալսարանները դարձնել «անկախ ադմինիստրատիվ կորպորացիաներ»: Սա, ըստ էության, նշանակում էր համալսարանների ինֆեգրացիա Ճապոնիայի կորպորատիվ փնտեսական համակարգի մեջ և կորպորացիաների պահանջներին համապատասխանող գիտահետազոտական համակարգի ձևավորում: Նամապատասխանաբար, պետական ֆոնդերը և ռեսուրսները սկսեցին բաշխվել՝ կենտրոնանալով գիտահետազոտական համալսարանների վրա:

«Բարձրագույն կրթության միջազգայնացումը և համաշխարհայնացումը» ենթագլխում (4.3) դիտարկվում է օտարերկրացի ուսանողների և դասախոսների թվի ավելացման և ուսումնական ծրագրերի արդիականացման ուղղությամբ Ճապոնիայի վարած քաղաքականությունը:

²⁸ Տե՛ս **Rosovsky, H.** The University: An Owner's Manual. New York: Norton, 1990:

Ճապոնիան, որը ազգային մեկուսացման երկարատև ավանդույթ ունեցող երկիր է, չի խրախուսել օտարերկրացի ուսանողների և դասախոսների մուտքը: Սակայն ներկայումս աճում է նրանց թիվը, հիմնվում են անգլերեն լեզվով ուսումնական դասընթացներ, փոխվում է օրենսդրությունը և միջազգայնացվում բարձրագույն կրթությունը: 1982թ. «Օտարերկրացի դասախոսների աշխատանքի ընդունման մասին օրենքը» Ճապոնիայի բարձրագույն կրթության հաստատությունները փարավ դեպի միջազգայնացում: Օտարերկրացի դասախոսների տեսակարար կշիռը 1992թ. 2.1%-ից 2007թ-ին հասավ 3.4%-ի: Ամենամեծ աճը տեղի ունեցավ մասնավոր համալսարաններում (2.7%-ից 4%), իսկ ազգային համալսարաններում աճը ամենացածրն էր (1.5%-ից 2.6%): Այս թվերը համընկնում են «Ճապոնիայի գիտության խրախուսման ընկերության» թվերի հետ, համաձայն որոնց ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում օտարերկրացի դասախոսները կազմում են համապատասխանաբար՝ 19.3%, 17.6% և 5.4%²⁹:

Դեռ 1983թ. Ճապոնիայի կրթության նախարարությունը հաստատեց «100 000 օտարերկրացի ուսանողների ընդունման ծրագիրը»: 2003թ., այդ ծրագրի իրականացման սկզբից 20 փարի անց օտարերկրացի ուսանողների թիվը հասավ 109 509-ի և դրանով իսկ կառավարությունը հասավ իր նպատակին: 2008թ. հունվարին վարչապետ Յասուո Ֆուկուդան (2007-2008) երկրի զարգացման քաղաքականության իր ծրագրային ելույթում հրապարակեց «300 000 օտարերկրացի ուսանողների ծրագիրը», որը կարևոր էր աշխարհի առաջ Ճապոնիան բացելու և մուտքը Ճապոնիա դյուրացնելու համար:

Չնայած 1983թ. ծրագրի իրագործումից հետո օտարերկրացի ուսանողների թիվը կտրուկ աճեց, բայց «Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության» (OECD) անդամ երկրների համեմատ այդ թիվը ցածր է: 2003թ. օտարերկրացի ուսանողները Ճապոնիայում միայն 3% էին, մինչդեռ Մեծ Բրիտանիայում նրանք 18.5% էին, իսկ Ավստրալիայում՝ 15.2%³⁰: Անգլո-ամերիկյան երկրների կրթական համակարգը և համալսարանների միջազգայնացման մակարդակը Ճապոնիայի համար առայժմ մնում են անհասանելի:

«Արդի նապոնական հասարակությունում արդյունաբերության զարգացման, կրթության և սոցիալական մոբիլության կապերի վերլուծություն»

²⁹ Տե՛ս Innovative Models for Promoting the Internationalization of Japanese Universities: Interim Report. Japan Society for the Promotion of Science, April, 2007, p. 53 // http://www.jsps.go.jp/english/e-bilat/e-u-kokusen/program_org/interimreport/interimreport.pdf [վերջ. այց. 17.06.2013, ժ. 16:39]:

³⁰ Տե՛ս **Ohmori, F.** Japan's Policy Changes to Recognise Transnational Higher Education: Adaptation of the National System to Globalisation // *The Observatory on Borderless Higher Education* 2004 // http://www.obhe.ac.uk/documents/view_details?id=50/ [վերջ. այց. 18.06.2013, ժ. 11:19]:

ենթագլխում (4.4) հեղինակը քննում է կրթության, սոցիալական մոբիլության և մշակութային վերարտադրության փոխազդեցությունը:

Ճապոնիայում հասարակության փոփոխությունները դասերի կրթական անհավասարությունը ուսումնասիրվում է ըստ երկու տեսությունների: Առաջինը՝ մշակութային վերարտադրության տեսությունն է (*cultural reproduction theory*), համաձայն որի արդի հասարակություններում պահպանվում և երբեմն էլ աճում է կրթական և մշակութային անհավասարությունը: Երկրորդը՝ ինդուստրիալացման ընդհանուր տեսությունն է, ըստ որի արդյունաբերության զարգացման հետ փոքրանում է կրթական անհավասարությունը: Մշակութային վերարտադրության տեսությունը պաշտպանում են Պ. Բուրդյուն և Ժ. Կ. Պասերոնը: Մյուս կողմից, Դ. Տրեյմանը ժամանակին առաջ է քաշել մի շարք դրույթներ ինդուստրիալացման ազդեցության մասին և նշել, որ «ինչքան ավելի է ինդուստրիալացված հասարակությունը, այնքան փոքր է ծնողների սրահայտի ազդեցությունը կրթության ձեռքբերման վրա»³¹:

Նայոնաբերված օրինաչափությունները ցույց են տալիս, որ սոցիալ-տնտեսական սրահայտի վրա կրթությունը դրականորեն է անդրադարձել, եթե խոսքը վերաբերում է արդյունաբերության զարգացման ավելի պարզ փուլին, օրինակ, 1970-80-ականների Ճապոնիային: Այդ փոփոխությունների համար Դ. Տրեյմանի ենթադրությունը ճիշտ է, այսինքն՝ փոքր է սոցիալական ծագման դերը: Նակաոակ դրա, 1990-ականների Ճապոնիայում սոցիալական ծագումը նորից կարևոր է դառնում: Նամաձայն Տ. Կիկավայի՝ «Ջարգացման այսպիսի առաջացած փոփոխություններում այնպիսի պարզ տեսությունները, ինչպիսիք են ինդուստրիալացման և մշակութային վերարտադրության տեսությունները այլևս չեն գործում»³²:

Ներպատերազմյան դարաշրջանում արդյունաբերական բանվորների և գրասենյակային աշխատողների համար նախատեսված աշխատատեղերի աճը առաջ բերեց այն մտածելակերպը, որ սոցիալական ծագումը քիչ կարևորություն ունի և ավելի մեծ տեղ փոխում է կրթությանը՝ որպես սոցիալական մոբիլության վճարման գործոնի³³:

Մակայն 1990-ականների սկզբներին ավարտվեցին ճապոնական հասարակության կառուցվածքային փոփոխությունները: Դրանց ավարտից հետո՝ բարձրագույն կրթության հանդեպ ձգտումը, որը բնութագրական էր հերպատերազմյան փոփոխություններին, երբ աճում էր աշխատատեղերի թիվը, անկում է ապրում, ակնհայտ են դառնում դասային

³¹ Մեջբերումն ըստ **Kikkawa, T.** Effect of Educational Expansion on Educational Inequality in Post-industrialized Societies: A Cross-cultural Comparison of Japan and the United States of America // *International Journal of Japanese Sociology*, Vol. 13, No. 1, 2004, էջ 101:

³² **Kikkawa, T.** նշվ. աշխ., էջ 116:

³³ Տե՛ս **Mori, N.** Education and Success: Changes in Structure and Thinking // *Social Science Japan: Newsletter of the Institute of Social Science*, No. 25, Feb., 2003, էջ 16:

տարբերությունները և հարկապես ցածր դասի մոտ է, որ ի հայտ է գալիս սովորելու և կրթության ձգտման թուլացում³⁴:

Վերջաբանում ամփոփված են հեղափոխության եզրակացությունները, որոնցից առավել կարևորներն են.

1. 1990-ականներին Ճապոնիայի սոցիոլոգիական ուսումնասիրությունների «մեթոդաբանական համապարասխանեցման» շնորհիվ ձևավորվեց գիտական հեղափոխության կոնֆլիկտաբանական նոր ավանդույթ՝ **Ճապոնիայի հեղմողեռնիստական** ուսումնասիրությունը: Ասիայի մյուս երկրների վերլուծություններում ազդեցիկ է կոնֆլիկտաբանական մեկ այլ ավանդույթ՝ **հեղգաղութային** ուսումնասիրությունը, որում, մարքսիզմի ակնհայտ գերակայությամբ, հիմնականում ուշադրություն է դարձվում սոցիալական բևեռացման, ճնշման և համանման այլ երևույթներին:

2. Ներկա արենախոսությունում Ճապոնիայի ուսումնասիրության հեղմողեռնիստական ավանդույթին հետևելու գլխավոր պարճառն այն էր, որ նկարի առնվեց «ազգային կարգի» կամ «էթնոմշակութային պեքականության» զարգացած դիսկուրսի գոյությունը այդ ավանդույթի ճապոնական տարբերակում: Բացի այդ, կարևոր դեր խաղաց նաև այն, որ «հեղխորհրդային հասարակություններում ազգային պեքությունների կառուցմանն ուղղված հիմնական գաղափարախոսությունը եղել ու մնում է անջարդական ազգայնականությունը»:

3. Նեղխորհրդային հասարակությունների հեղափոխության համար կարող է ուսանելի լինել «ազգային կարգի» ուսումնասիրությանը միտված ճապոնական կոնֆլիկտաբանական հեղմողեռնիստական ավանդույթը: Ոչ պակաս կարևոր է և այն հանգամանքը, որ հեղխորհրդային հասարակությունների ուսումնասիրությունը կարող է իրականացվել նաև հեղգաղութային տեսության դիրքերից, քանի որ այդ երկրներում գոյություն ունեն դրա նպատակահարմարությունը հիմնավորող սոցիալ-տնտեսական խոր հակասություններ: Նեղխորհրդային ազգայնականությունը փորճում է առաջադրել հանրույթը միավորող ազգային գաղափարներ՝ անտեսելով և քողարկելով նույն հանրույթը մասնատող սոցիալական բևեռացումը, «նեղգաղութարիական տնտեսությունը», «ակադեմիական կախվածության» սպառնալից աճը Արևմտյան Եվրոպայից և Նյուսիսային Ամերիկայից, հսկայաճավալ արտագաղթը և այլն: Այս երկու

³⁴ Տեն նույն տեղում, էջ 17:

հեղափոխական ավանդույթների՝ «ազգային կարգի» և սոցիալ-փոփոխական ճնշման ուսումնասիրությունների զուգահեռ օգտագործումը կարող է ապահովել հեղափոխության հասարակությունների շարքի ավելի լիարժեք և ընդգրկուն ըմբռնում:

4. 1990-ականների «մեթոդաբանական համապարասխանեցման» առնչությամբ անհրաժեշտ է ընդգծել մեկ կարևոր հանգամանք՝ այն դեպքում, երբ ճապոնիայում և Ասիայում, ինչպես նաև Արևմուտքում, որպես կանոն, իշխում են հեղափոխային և հեղափոխական ուսումնասիրությունները, որոնք կոնֆլիկտաբանական ավանդույթի դրսևորումներ են, նախկին ԽՍՀՄ երկրներում գերիշխում է ֆունկցիոնալիստական ավանդույթը, որը խուսափում է հասարակության կոնֆլիկտաբանական վերլուծություններից, ուստի թմբկահարում է ընդհանուր մշակութային արժեքների հիման վրա հասարակության համախմբման գաղափարը, որը հազիվ թե այդ ձևով հնարավոր լինի իրականացնել:

Արևմտաօտարական հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հեղափոխական հրատարակումներում.

1. **Гишян Б. Ж.** Влияние интернет-технологий на динамику суицидных проявлений в современном обществе (на примере Японии) // *Социология и право*, № (1)12, 2012, Санкт-Петербург: Издательство Санкт-Петербургского университета управления и экономики, с.38-43.

2. **Գիշյան Բ.** Նամաշիարիայնացումը և մշակութային ավանդապահության դրսևորումները արդի ճապոնիայում // *Բանբեր Երևանի համալսարանի, Նասարակական գիտություններ*, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2009, 3(129), էջ 178-189:

3. **Գիշյան Բ.** Ճապոնական մոդեռնիզմի ճգնաժամը և «երեխայի» շուրջ դիսկուրսը 1990-ականների վերջերին // *ՆՄ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների*, ԳԱԱ հրատարակչություն, 2009, 1(624), էջ 73-83:

4. **Գիշյան Բ.** Նորագույն փոփոխությունները և ինքնասպանությունը ճապոնիայում, *Բանբեր Երևանի համալսարանի, Նասարակական գիտություններ*, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2007, 3(123), էջ 92-99:

5. **Գիշյան Բ.** Մահվան արևմտյան և արևելյան արժեքային կողմնորոշումների համեմատական քննություն, *Բանբեր Երևանի համալսարանի, Նասարակական գիտություններ*, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2004, 2 (113), էջ 99-109:

6. **Գիշյան Բ.** Կամավոր մահ. Ճապոնացիների ազգային ինքնության քննություն, *Բանբեր Երևանի համալսարանի, Նախարարական գիտություններ, Երևանի համալսարանի հրատարակչություն*, 2003, 2(110), էջ 130-138:

Գիշյան Բարսեղ Զորաբեկ

**ПРОБЛЕМА <<МЕТОДОЛОГИЧЕСКОЙ АДЕКВАТИЗАЦИИ>>
В СОЦИОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЯХ ИЗМЕНЯЮЩЕГОСЯ
ОБЩЕСТВА: НА ПРИМЕРЕ ЯПОНИИ КОНЦА XX – НАЧАЛА XXI ВЕКОВ**

Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук по специальности 22.00.01 – <<История, теория и методология социологии>>.

Защита состоится 18-го декабря 2013 г. в 15.00 часов на заседании Специализированного совета 013 Философии и социологии ВАК РА при Ереванском государственном университете.

Адрес: 0025, г. Ереван, ул. Абовяна 52а.

РЕЗЮМЕ

Диссертация анализирует теоретические и методологические основы изучения японского общества конца XX – начала XXI веков, в том числе – изменения методологии и <<методологическую адекватизацию>> социологических исследований.

Научная новизна работы заключается в том, что проведено комплексное методологическое исследование японского общества в контексте социологических обсуждений в Западной Европе, Северной Америке и Азии, а также раскрыта актуальность изучения японского опыта <<методологической адекватизации>> для постсоветских обществ.

Теоретическая значимость работы состоит в углублении представлений о методологии изучения национальных государств.

Практическая значимость работы определяется тем, что она уточняет методологические подходы, которые могут быть важны для изучения постсоветских национальных государств, а также для формирования университетских курсов с методологической направленностью. Диссертация может стать основой для разработки предназначенных для студентов, представляющих страны Ближнего и Среднего Востока, а также – Азии, учебных программ, в которых актуальны научно-теоретические и научно-методологические основы изучения современных обществ Востока.

Работа состоит из введения, четырех глав, заключения и списка литературы.

В первой главе рассматриваются основные этапы <<методологической адекватизации>> исследований японского общества и их связь с социальными, экономическими, культурными и политическими изменениями в обществе. Кроме того, обсуждается роль западного академического влияния на формирование новых теорий и методологии в странах Азии.

Во-второй, третьей и четвертой главах автор анализирует наиболее обсуждаемые в японской социологии и в англо-американских исследованиях японского общества темы, в том числе – <<упадок национального строя>> в конце XX века, проблемы воспитания детей и подростков в современной Японии, <<академический апартеид>>, <<лингвистический империализм английского языка>>, самоубийства, влияние цифровых технологий на общество, кризис японских университетов, реформа высшего образования и т. д.

Автор подробно рассматривает воздействие цифровых технологий на динамику суицидных проявлений в конце XX века. Данные проявления рассматриваются на широком фоне развития постиндустриального общества и современных технологий как динамичное явление, имеющее социальный, экономический и технологический контекст.

Автор анализирует глобализация и проявления традиционности в современной Японии, исследует японские и западные точки зрения о роли западных специалистов и английского языка в становлении современного японского общества и экономики. Постоянное присутствие многочисленных западных специалистов в Японии и возрастающее влияние английского в послевоенный период рассматриваются в контексте глобализации японского национального государства и трансформации японской идентичности. Подчеркивается важность вышеупомянутого подхода для понимания послевоенного японского общества.

Положения и выводы работы базируются на обстоятельном изучении японской и западной (в основном – англо-американской) научной литературы о развитии современного японского общества, а также – литературы по теории и методологии изучения японского общества. Кроме того источниковедческой основой для диссертации послужили социальные и экономические статистические данные японского статистического бюро, Организации экономического сотрудничества и

развития, Всемирной организации здравоохранения, сообщения и аналитические сводки японских и западных информационных агентств, японская пресса и материалы научных конференций.

Исследование завершается заключением, в котором делаются выводы о применимости японского опыта <<методологической адекватизации>> в исследованиях постсоветских обществ.

Barsegh Gishyan

**THE KEY PROBLEM OF METHODOLOGICAL ADEQUACY IN THE
SOCIOLOGICAL STUDIES OF A CHANGING SOCIETY**

(By the example of the Japanese society of the late 20th and early 21st centuries)

Thesis for Ph.D. in sociology in the field of

“History, Theory and Methodology of Sociology” (22.00.01)

The defense of the Thesis is to take place at 15.00 on 18 December 2013 at the Session of the Specialised Council 013 of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia, Yerevan State University, 52 Abovyan St., 0025, Yerevan

Summary

The aim of the Thesis is to examine the theory and methodology in the studies of the Japanese society of the late 20th and early 21st centuries, including the changes in the research methodology and methodological adequacy of social science research.

The scientific innovation of this work is in providing comprehensive methodological study of the Japanese society in the context of social science debates in Western Europe, North America and Asia, as well as reveals the importance of studying methodology changes in the research of Japan.

The theoretical significance of the work is in examining the theories and methodologies for the study of the nation-state.

The practical significance of the Thesis is determined by the fact that it clarifies the methodological approaches that may be important for the study of the post-Soviet nation-states, as well as for the establishment of university courses with a methodological orientation. In addition,

the Thesis can serve a basis for developing study courses for students from countries of the Middle East, as well as Asia in which discussion of research methodology is topical.

The Thesis consists of four chapters, an introduction, a conclusion and a list of literature.

The first chapter examines the methodology evolution in the post-war studies of Japanese society and the role of social, economic, cultural and political changes in this context. Besides, the first chapter examines the role of the Western academic influence in the establishment of new theories and methodologies in Asian societies.

The second, third and fourth chapters analyze the topics most discussed in the Japanese sociology and Anglo-American studies on Japan, in particular - "retreat of the national order" at the end of 20th century, the problem of education of children and adolescents in modern Japan, the "academic apartheid" and "English linguistic imperialism", suicide and the impact of internet on society, the crisis of Japanese universities, the higher education reform etc. The Author basing on the materials and reports of the Japanese mass media analyses the impact of digital technologies on the trend of suicide in the end of 20th century. Suicide-related events described as a changing phenomenon that has a social, economic and technology context, are studied against the broad background of the development of postindustrial society and modern technologies.

The Thesis examines the manifestations of globalization and traditionalism in contemporary Japan, the Japanese and Western views on the role of Western professionals and English in the establishment of modern Japanese state and economy. The presence of Western specialists in Japan and the growing influence of English in the post-war era are being examined in the context of globalization and transformation of the Japanese national state and identity. The author emphasizes the importance of this approach to the understanding of post-war Japanese society.

The statements and conclusions of the work are based on the detailed study of the Japanese and Western, mainly Anglo-American scientific literature on the social, cultural, economic and political developments in modern Japan.

The source base of the Thesis are the social and economic statistics of the Statistics Bureau of Japan, Organization for Economic Cooperation and Development, and World Health Organization, the issues and analyses of the Japanese and Western news agencies, the Japanese press, and the materials of academic fora on Japan.

In the conclusion inferences are drawn on applicability of methodological studies of Japan for the research of the post-Soviet societies.